

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2 (87)

2020 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ղ Ի ո լ ր ղ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Նիկոլայ Ստոյկո – ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Ղավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետների:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am

Դասիչ՝ 77771

Տպագրական 13.5 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

24.08.2020

Հանձնված է տպագրության

29.10.2020

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2 (87)
2020 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Николай Стойко – д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb)

13.5 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.08.2020
Подписано к печати 29.10.2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏՔՍՏՈՒՄ (ՄԱՍ 2)..... 4

Քրիստինե Գաբուզյան

ՀԱՅԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆԵԳԱՏՈՐ ԵՎ ՎԻՆԴԻԿԱՑԻՈՆ ՀԱՅՑԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 19

Արթուր Վարդանյան

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ..... 32

Աշխեն Սողոմոնյան

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄԱԿՈՐ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՔԵՐԸ..... 41

Լիլիթ Պետրոսյան

«EX OFFICIO» ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ..... 48

Գևորգ Իսրայելյան

ՊՈՐՆԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ 57

Հարություն Խաչիկյան

ԱՆՉԱՓՈՎՈՒՄ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐ. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՍՊԵԿՏ 63

Էմիլյա Աբրահամյան

ՊԱՏԺԻ ՆՇԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ..... 71

Վարազդատ Սուքիասյան

ԳԱՂՏՆԻՔԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ..... 81

Տաթևիկ Գևորգյան

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՂԿԱՑԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՈՒՄԸ 91

Արսեն Մարտիրոսյան

ՎԵՐԱԴԱՍ ԴԱՏԱԽԱՋԻ ԿՈՂՄԻՑ ՀՍԿՈՂ ԴԱՏԱԽԱՋԻ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ «ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ» ԴԵՄ ՔՆՆԻՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՈՐՈՇ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ 95

Արտակ Հովհաննիսյան

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ 102

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐ. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՍՊԵԿՏ

Հարություն Խաչիկյան

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր,

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ,

իրավաբանական գիտությունների դոկտոր

Տիեզերքի աներևակայելի խորքերում տիեզերագնացները հայտնաբերում են «Կենդանի» մոլորակ: Տիեզերանավը հարկադիր վայրէջք է կատարում: Տեղաբնիկներն անմիջապես շրջապատում են տիեզերանավի անձնակազմին, յուրաքանչյուրին տեղավորում ճաղապատ վանդակներում և նրանց ենթարկում անվերջանալի փորձարկումների: Օրերից մի օր տիեզերանավի հրամանատարը հայտնաբերում է տեղական «արտադրության» գիշատիչ մկնիկ: Նա մետաղի և փայտի կտորներից պատրաստում է թակարդանման վանդակ, և գիշերը գիշատիչը հայտնվում է թակարդում: Առավոտյան «բնիկները», տեսնելով հրամանատարի «բանտարկյալին», անմիջապես ազատ են արձակում ամբողջ անձնակազմին և ներողություն խնդրում. «բնիկները» չարաչար սխալվել էին: Նրանք մարդկանց ընկալել էին որպես անմիտ-տգետ արարածներ: Միայն բանական ու խելամիտ արարածն է ընդունակ մեկ այլ կենդանի արարածի գրկել ազատությունից:

Ֆանտաստ գրողի այս տխուր այլաբանությունը խոր իմաստ է պարունակում, որը, կարծում ենք, ընկալվեց: Այո՞, այդպիսին է մարդը: Անիմաստ է այստեղ քննարկել դա լավ է, թե՛ վատ: Դառը ճշմարտությունը փաստում է այն, որ մարդկային հասարակության զարգացման ներկա փուլում քաղաքակրթության պահպանման պայմաններից մեկը մարդկային օրենքները կոպտորեն խախտողների նկատմամբ ազատագրկման և մյուս պատժատեսակների համատարած կիրառումն է: Այլընտրանք կա, թերևս՝ նրանց անխտիր վերացումը: Քանի որ երրորդ տարբերակ չկա, ուստի խիստ մարդկայնորեն ընտրում ենք չարիքներից փոքրագույնը:

Քրեական իրավունքի բոլոր համակարգերում ակնբախ է մի դիրքորոշում. անմեղը պետք է արդարացվի, իսկ մեղավորը՝ պատժվի: Առանց պատժի և նրա հարակից ինստիտուտների, որոնց միջոցով որոշվում են պատժի չափն ու կատարումը, քրեական իրավունքը գոյություն ունենալ չի կարող: Հետևաբար սխալված չենք լինի, եթե ասենք, որ վերջինիս հիմնական բնութագրիչ գծերը պայմանավորված են պատժի ինստիտուտով:

Ակնհայտ է, որ դեռ ոչ ոք չի ապացուցել՝ պատիժը բարի՞ք է, թե՞ չարիք: Ըստ երևույթին, այն միաժամանակ և՛ մեկն է, և՛ մյուսը: Հայտնի է, որ հանցագործությունների կանխման գործում պատիժը երկրորդական նշանակություն ունի, որովհետև չի վերացնում հանցավորությանը նպաստող գործոնները, ուղղված չէ հանցագործությունների պատճառների և պայմանների չեզոքացմանը: Միևնույն ժամանակ չի կարելի անա թերազնահատել պատժի կանխիչ նշանակությունը: Կան բազմաթիվ հետազոտություններ, որոնք ապացուցում են, որ պատժողական ճիշտ քաղաքականությունը, պատիժների կատարման գործընթացի բարելավումը կարող են էական դրական դեր կատարել հանցավորության նկատմամբ վերահսկողության, հանցավորությունը որոշակի տանելի մակարդակի վրա պահելու գործում: Ուստի, թեև պատժի՝ որպես հանցավորության դեմ պայքարի միջոցի նկատմամբ վերաբերմուն-

¹ Տե՛ս Леонгард П.М. Неземной самородок. СПб., 2009, էջ 32:

քը միանշանակ չէ, այնուամենայնիվ պետք է փաստել, որ տեսանելի ապագայում հասարակությունն առանց պատիժների չի կարող գոյատևել:

«Հ քրեական օրենսգրքի նախագծի»¹ 57-րդ հոդվածի առաջին մասը պատժի հասկացությունը շարադրում է գրեթե նույնությամբ, ինչպես նախատեսված է գործող քրեական օրենսգրքում, բայց նպատակների հարցում ցուցաբերվում է այլ մոտեցում: Պատժի նպատակներն իրավացիորեն շարադրվում են նորովի: «Հ ՔՕ նախագծի հոդված 57-ի երկրորդ մասը սահմանում է պատժի նպատակները՝ վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները: «Հ ՔՕ նախագծով սահմանված պատժի նպատակների թվում, կարծում ենք, կարելի է առանձնացնել պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման նպատակը որպես նորություն այս համակարգում: Այս նպատակը քրեակատարողական իրավունքի գիտության մեջ սահմանվում է որպես հոգեբանամանկավարժական, տնտեսական, թերապևտիկ, իրավաբանական, սոցիալական և կազմակերպական միջոցների բարդ համալիր կազմող երկարատև գործընթաց, որն ուղղված է յուրաքանչյուր դատապարտյալի մոտ ձևավորելու պատժի կրումից հետո հասարակական կյանքում ընդգրկվելու համար անհրաժեշտ ընդունակություններ, հմտություններ և պատրաստակամություն: Բայց միաժամանակ դատապարտյալի վերասոցիալականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ են նաև պատժի կրման պայմաններին վերաբերող որոշակի պահանջներ: Դրանք պետք է լինեն բավարար, որպեսզի պատժի կրման ընթացքում դատապարտյալը չկորցնի հասարակությունում նախկինում ձեռք բերած վարքի կանոնները և հմտությունները»:

«Հ քրեակատարողական օրենսգրքի նախագծի»³ 6-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է «Դատապարտյալի վերասոցիալականացումը և դրա հիմնական միջոցները» վերտառությամբ նորմ, որտեղ սահմանվում են նաև դատապարտյալի վերասոցիալականացման հիմնական միջոցները՝ պատիժները կատարելու և կրելու սահմանված կարգն ու պայմանները, դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները, դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը:

Վերասոցիալականացման միջոցները կիրառվում են՝ հաշվի առնելով պատժի տեսակը, կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, դատապարտյալի անձը և նրա վարքագիծը պատժի կրման ընթացքում, դատապարտյալի վերաբերմունքն իր կատարած հանցագործությանը, պատժի ժամկետը, ինչպես նաև պատժի կատարումը տարբերակելու և անհատականացնելու սկզբունքով պայմանավորված այլ հանգամանքներ:

«Հ գործող քրեական օրենսգրքով»⁴ և «Հ ՔՕ նախագծով նախատեսված պատժի նպատակներն ամբողջությամբ վերաբերում են, բնականաբար, և՛ չափահաս, և՛ անչափահաս դատապարտյալներին: «Հ ՔՕ նախագիծի 99-րդ հոդվածի 4-րդ մասը, պատժի ընդհանուր նպատակներից զատ, հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նպատակ է սահմանում նրա ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական բնականոն զարգացման ապահովումը, նրա դաստիարակումը և պաշտպանումը այլ անձի բացասական ազդեցությունից: Անչափահասների համար նախատեսված վերը նշված նպատակը որոշակի իմաստով ընդհանուր եզրեր ունի պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման

¹ Այսուհետ՝ «Հ ՔՕ նախագիծ»:

² Տե՛ս Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները «Հ 2015թ. փոփոխություններով Սահմանադրության համատեքստում», Երևան, 2016, էջ 69:

³ Այսուհետ՝ «Հ ՔԿՕ նախագիծ»:

⁴ Այսուհետ՝ «Հ ՔՕ»:

նպատակի հետ, այսինքն՝ մարդու, հասարակության, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ դատապարտյալների հարգալից վերաբերմունքի ձևավորման, իրավահպատակ վարքագծի խթանման, դատապարտյալի առողջ կենսակերպի ամրապնդման և զարգացման հետ:

Հանցանք կատարած անչափահասների պատասխանատվության առանձնահատկություն է այն, որ նրանց նկատմամբ կարող են կիրառվել ոչ միայն պատիժներ, այլ նաև դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ: Քրեական պատիժը պետք է տարբերել նաև այս միջոցներից: Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները կատարյալ փոխարեն դատարանի կողմից նշանակվում են առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասի նկատմամբ (ՀՀ ՔՕ, 91, 92-րդ հոդվածներ): Վերջիններիս և քրեական պատժի հիմնական տարբերությունը բխում է դրանց բովանդակությունից. դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները չեն կրում պատժիչ, ճնշող բնույթ, իսկ հարկադրանքն այստեղ անհամեմատ ավելի փոքր է, քան քրեական պատիժներում: Այս միջոցների էությունը դատապարտյալի կողմից որոշակի այնպիսի սահմանափակումներ կրելն է, ինչպիսիք են՝ պատճառված վնասը հարթելը, ժամանցի ազատության սահմանափակումը և այլն: Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներից պարբերաբար խուսափելու դեպքում անչափահասի նկատմամբ ընտրված միջոցը վերացվում է, և նյութերն ուղարկվում են դատարան՝ նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար: Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները դատվածություն չեն առաջացնում և կարող են կիրառվել 14-ից 18 տարեկան անչափահասների նկատմամբ: Պատիժների և հարկադրանքի այս միջոցների նմանությունը դրանց նշանակման հիմքի՝ հանցանքի կատարման մեջ է:

Անչափահասների նկատմամբ կիրառվող պետական հարկադրանքի միջոցների առանձնահատկությունները այն են, որ օրենքով նախատեսված պատժատեսակներից նրանց նկատմամբ կարող են կիրառվել ոչ բոլորը, այլ հիմնականում ազատությունից զրկելու հետ չկապվածները:

Այդ մասին է վկայում նաև ՀՀ դատական պրակտիկան: Հայտնի է, որ ՀՀ-ում անչափահասների նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կատարումն ապահովում է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկը, որտեղ վերջին տարիների ընթացքում խիստ սահմանափակ քանակությամբ անչափահասներ են պատիժ կրել: Այսպես, 2016թ.-ին՝ երեք, 2017թ.-ին՝ հինգ անչափահաս դատապարտյալ, 2018թ.-ին՝ նախնական կալանքի տակ գտնվող երկու անձ և երկու դատապարտյալ, 2019թ.-ին՝ նախնական կալանքի տակ գտնվող երկու, իսկ 2020թ.-ին՝ հինգ նախնական կալանքի տակ գտնվող անչափահաս:

Անչափահասները հիմնականում դատապարտվել են սեփականության, հասարակական անվտանգության և կյանքի ու առողջության դեմ ուղղված հանցագործությունների համար: Նրանց շրջանում տարածված հանցագործություններն են գույքի հափշտակումը, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը և թմրամիջոցների հետ կապված հանցագործությունները: Կայուն թիվ են կազմում այն անչափահասները, ովքեր չեն աշխատել և չեն սովորել, ինչպես նաև այն անչափահասները, ովքեր հանցագործությունը կատարել են մի խումբ անձանց կազմում, այդ թվում՝ չափահասների:¹

ՀՀ ՔՕ նախագիծը՝ ի տարբերություն ՀՀ ՔՕ-ի, նորովի է շարադրել անչափահասներին վերաբերող բաժինը, այն է՝ «Անչափահասների և քսանմեկ տարին չլրացած անձանց քրեական պատասխանատվության առանձնահատկությունները»

¹ «Ազատագրված անձանց վերաօգնականացման հիմնախնդիրները ՀՀ-ում», «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի հողմից իրականացված հետազոտություն, Երևան, 2020, էջ 72:

(բաժին 5): Այս բաժնում սահմանվել է ինքնուրույն 15-րդ գլուխը՝ «Անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի նպատակները և տեսակները»:

ՀՀ ՔՕ նախագծի 100-րդ հոդվածը, ՀՀ ՔՕ-ով նախատեսված անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի տեսակներից զատ, նախատեսում է նաև որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը և ազատության սահմանափակում պատժատեսակները: Բացի այդ՝ կալանք պատժատեսակը նախագծով վերանվանվել է կարճաժամկետ ազատազրկում:

Անչափահասի նկատմամբ այս կամ այն պատժատեսակի նշանակումը կախված է բազմաթիվ հանգամանքներից, որոնք օրենքով սահմանված կարգով ենթակա են պարտադիր ապացուցման: Անչափահասի հոգեվիճակը, տարիքային առանձնահատկությունները, բարձր էմոցիոնալ դյուրագրգռությունը, որը վերածվում է տաքարյունության, էներգիայի ավելցուկը և դրա ոչ ճիշտ օգտագործումը, դատարանի կողմից պետք է հաշվի առնվեն պատժի անհատականացման ժամանակ:

Անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս, բացի պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներից, հաշվի են առնվում նրա կյանքի և դատարարության պայմանները, անձին վերաբերող այլ առանձնահատկություններ, ինչպես նաև չափահաս անձանց ազդեցությունը նրա վրա:

Այժմ փորձենք ներկայացնել ՀՀ ՔՕ նախագծով անչափահասների համար նախատեսված ազատությունից զրկելու հետ կապված պատիժներին վերաբերող որոշակի առանձնահատկություններ:

ՀՀ ՔՕ նախագծի 103-րդ հոդվածով սահմանվում է, որ կարճաժամկետ ազատազրկումը (ՀՀ ՔՕ-ով՝ կալանքը) անչափահասի նկատմամբ նշանակվում է միայն այն դեպքում, երբ ավելի մեղմ պատժատեսակը չի կարող նպաստել պատժի նպատակների իրականացմանը: Ոչ մեծ ծանրության հանցագործության համար, ինչպես նաև առաջին անգամ հանցանք կատարելու դեպքում, որը միջին ծանրության հանցանք է, անչափահասի նկատմամբ կարճաժամկետ ազատազրկում չի նշանակվում:

ՀՀ գործող ՔԿՕ-ն, ինչպես նաև ՀՀ ՔԿՕ նախագիծը կարճաժամկետ ազատազրկման կրման որոշակի առանձնահատկություններ են նախատեսում անչափահաս դատապարտյալների համար: Այսպես, անչափահաս դատապարտյալին, ի տարբերություն, չափահասի, կարող է ամսվա ընթացքում մեկ անգամ տրամադրվել մինչև չորս ժամ տևողությամբ կարճատև տեսակցություն ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հետ: Չափահաս դատապարտյալն օգտվում է առնվազն մեկ ժամ, իսկ անչափահաս դատապարտյալը՝ առնվազն երկու ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքի իրավունքից:

Քրեակատարողական համակարգում ազատությունից զրկելու հետ կապված պատիժներ կրող անչափահասների իրավական վիճակի ապահովումն ունի հիմնարար նշանակություն: Խնդիրը հատկապես կարևորվում է այն առումով, որ վերաբերում է անչափահասներին, այսինքն նրանց, ովքեր ունեն առանձնահատուկ վերաբերմունքի կարիք: Քրեակատարողական հիմնարկներում անչափահասների խոցելիությունը պայմանավորվում է բռնության, համասեռ բռնության ենթարկվելու վտանգով, տարիքով պայմանավորված առողջապահական և խնամքի հատուկ միջոցների, ընտանքի անդամների հետ արտաքին կայուն կապի, կրթության, աշխատանքի բացակայությամբ և այլն: Անչափահաս դատապարտյալներին պատժի կրման ընթացքում ուղեկցում են բազմաթիվ դժվարություններ, որն անհրաժեշտություն է առաջացնում հոգ տանել նրանց հատուկ կարիքներին (հոգեբանական աջակցություն, պատժի կատարման և կրման բավարար պայմաններ, կրթություն, զբաղվածություն և այլն):

ՀՀ ՔԿՕ-ն դատապարտյալների իրավական վիճակը սահմանող գլխում (ՀՀ ՔԿՕ 2-րդ գլուխ, հոդված 12) դատապարտյալների հիմնական իրավունքները սահմանելիս, նախատեսում է դատապարտյալի անձնական անվտանգության իրա-

վունքը, բայց չի բացահայտում դրա բովանդակությունը: Խիստ կարևորելով դատապարտյալների անձնական անվտանգության իրավունքի պաշտպանությունը հատկապես անչափահաս դատապարտյալի համար, ՀՀ ՔԿՕ նախագծում ինքնուրույն նորոժով (ՀՀ ՔԿՕ նախագիծ, հոդված 11) նախատեսվում է այն:

Խոսքը ազատությունից զրկելու հետ կապված պատիժների դատապարտված անձանց անձնական անվտանգության ապահովման մասին է մասին է, այսինքն՝ երբ դատապարտյալն ամբողջությամբ կամ մասամբ մեկուսացված է հասարակությունից և գտնվում է քրեակատարողական համակարգի պահպանության ու հսկողության ներքո: Նման դատապարտյալները հնարավորություն չունեն ինքնուրույն ապահովել իրենց անվտանգությունը: Դատապարտյալների անձնական անվտանգությանը վտանգ սպառնալու դեպքում նրանք իրավունք ունեն խնդրանքով դիմելու պատիժներ կատարող հիմնարկի ցանկացած պաշտոնատար անձի, ընդ որում՝ սպառնալիքի բովանդակությունը կարող է տարբեր լինել՝ սպանության, մարմնական վնասվածքներ հասցնելու, համասեռ բռնության սպառնալիք և այլն: Նման դեպքում համապատասխան պաշտոնատար անձինք պարտավոր են անհապաղ միջոցներ ձեռնարկել դատապարտյալների անձնական անվտանգության ապահովման համար: Այդ նպատակով վերը նշված պատժատեսակները կատարող հիմնարկի պետը դատապարտյալի դիմումի համաձայն կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է ընդունում դատապարտյալին անվտանգ վայր տեղափոխելու կամ դատապարտյալի անձնական անվտանգությունն ապահովող այլ միջոցների կիրառման մասին:

ՀՀ ՔԿՕ նախագիծը, ի տարբերություն գործող քրեակատարողական օրենսդրության, նախատեսում է ինքնուրույն գլուխ հետևյալ վերտառությամբ՝ «Ազատագրված կատարման առանձնահատկություններն անչափահաս դատապարտյալների նկատմամբ», որտեղ նախատեսվում են ազատագրվում կատարող քրեակատարողական հիմնարկների տեսակները անչափահաս դատապարտյալների համար: ՀՀ ՔԿՕ նախագծի հոդված 123-ը սահմանում է.

1. Անչափահաս դատապարտյալների համար նախատեսված՝ ազատագրվում կատարող քրեակատարողական հիմնարկի ընդհանուր պայմաններում պատիժ են կրում ազատագրված դատապարտված անչափահասները, ինչպես նաև անչափահաս տարիքում հանցագործություն կատարած մինչև 21 տարեկան անձինք:

2. Նախկինում ազատագրվում կրած և դատվածություն ունեցող անչափահասները պատիժ են կրում անչափահասների քրեակատարողական հիմնարկի խիստ պայմաններում:

ՀՀ ՔԿՕ նախագծի 124-րդ հոդվածը նախատեսում է նաև պատժի կրման պայմանները քրեակատարողական հիմնարկներում; Այսպես.

1. Քրեակատարողական հիմնարկի ընդհանուր պայմաններում դատապարտյալը պահվում է մինչև ութ դատապարտյալի համար նախատեսված բնակելի կացարանում: Նրանց թույլատրվում է.

1) սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու համար իրենց անձնական հաշիվներից ամսական ծախսել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով գումար,

2) տարվա ընթացքում ունենալ տասներկու կարճատև և տասներկու երկարատև տեսակցություն:

2. Քրեակատարողական հիմնարկի խիստ պայմաններում դատապարտյալը պահվում է մինչև վեց դատապարտյալի համար նախատեսված աշխատանքից կամ ուսումից ազատ ժամերին փակվող, մեկուսացված բնակելի կացարանում: Նրանց թույլատրվում է.

1) սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու համար իրենց անձնական հաշիվներից ամսական ծախսել նվազագույն աշխատավարձի քառասունապատիկի չափով գումար,

2) տարվա ընթացքում ունենալ ութ կարճատև և ութ երկարատև տեսակցություն,

3. Քրեակատարողական հիմնարկի ընդհանուր պայմաններում դատապարտյալը կարող է ցերեկային ժամերին տեղաշարժվել քրեակատարողական հիմնարկի տարածքի սահմաններում և քրեակատարողական հիմնարկի պետի թույլտվությամբ՝ դրանից դուրս:

4. Քրեակատարողական հիմնարկի խիստ պայմաններում դատապարտյալը կարող է տեղաշարժվել ցերեկային ժամերին՝ քրեակատարողական հիմնարկի այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում:

5. Պատժի կրման սահմանված կարգը պահպանելու, օրինապահ վարքագիծ դրսևորելու և պատժի ժամկետի մեկ երրորդը կրելուց հետո քրեակատարողական հիմնարկի ընդհանուր պայմաններում պատիժ կրող անչափահաս դատապարտյալը կարող է բնակվել քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս, առանց պահպանության, բայց տվյալ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի հսկողության ներքո: Նրանց թույլատրվում է.

1) սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու համար իրենց անձնական հաշիվներից ծախսել առանց սահմանափակման գումար,

2) առանց քանակի սահմանափակման ստանալ ծանրոցներ, հանձնուքներ և փաթեթներ,

3) առանց սահմանափակման ունենալ կարճատև տեսակցություններ, ինչպես նաև տարվա ընթացքում տասներկու երկարատև տեսակցություն,

4) կրել քաղաքացիական հագուստ:

ՀՀ գործող ՔԿՕ-ի 109-րդ հոդվածի, ինրպես նաև ՀՀ ՔԿՕ նախագծի 129-րդ հոդվածի համաձայն՝ ազատագրված դատապարտված անչափահասը մինչև պատժի ժամկետը լրանալը պատիժը կրում է մինևույն քրեակատարողական հիմնարկում, բայց ոչ ավելի, քան նրա քսանմեկ տարեկան դառնալը: Տասնութ տարին լրացած դատապարտյալների վրա տարածվում են անչափահաս դատապարտյալների համար սահմանված պատժի կրման պայմանները, սննդի և նյութակենցաղային ապահովման չափաքանակները:

Մարդասիրության սկզբունքից ելնելով՝ ՀՀ ՔՕ նախագծը սահմանում է, որ մինչև տասնվեց տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չեն կարող գերազանցել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված պատժի առավելագույն և նվազագույն ժամկետի կամ չափի մեկ երրորդը: Տասնվեցից տասնութ տարին լրացած հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը կրճատվում է մեկ երկրորդով: Եթե նշված կանոնները կիրառելիս պատժի ժամկետը կամ չափը պակաս է ստացվում տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից կամ չափից, ապա նշանակվում է ստացված ժամկետով կամ չափով պատիժ:

ՀՀ ՔԿՕ նախագծի 130-րդ հոդվածի համաձայն՝ տասնութ տարին լրացած բացասականորեն բնութագրվող դատապարտյալը անչափահասների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկից տեղափոխվում է ազատագրվում կատարող բաց քրեակատարողական հիմնարկ պատժի կրումը շարունակելու համար:

Քսանմեկ տարին լրացած բոլոր դատապարտյալները պատժի կրումը շարունակելու համար տեղափոխվում են ազատագրվում կատարող բաց քրեակատարողական հիմնարկ:

Այսպիսով, պետք է նկատի ունենալ, որ անչափահասի նկատմամբ ազատագրվում նշանակելը պատժի բացառիկ միջոց է, որը նշանակվում է միայն այն դեպքում, երբ ոչ մի այլ միջոց չի կարող ապահովել պատժի նպատակների իրականացումը:

Ցանկացած պարագայում ազատությունից զրկելու հետ կապված պատիժների դատապարտված յուրաքանչյուր անչափահասի համար պետք է ստեղծվեն պահման և վերաբերմունքի արժանապատիվ պայմաններ: Խիստ կարևորվում են անչափահաս դատապարտյալի համար պետության կանխատեսելի վարքագիծն ու անհատական վերաբերմունքը:

Պետությունը պարտավոր է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցներն անազատության մեջ գտնվող անչափահասներին ֆիզիկական և հոգեկան մեկուսացվածության, առողջության և բարեկեցության ապահովման համար: Անչափահաս դատապարտյալների իրավական վիճակի կարգավորումը պահանջում է մանրակրկիտ, հետևողական, հոգատար և մասնագիտական աշխատանք: Անչափահաս դատապարտյալների նկատմամբ պատշաճ վերաբերմունքը հատկապես կարևորվում է հասարակության մեջ նրանց ունեցած դերով և արժանապատիվ տեղն ու ապագան ապահովելու հիմնարար գաղափարով: Այս ոլորտում անհրաժեշտ և իրական արդյունքներ արձանագրելու նպատակը համակողմանի մոտեցման կարիք ունի, որը ենթադրում է նաև քրեակատարողական օրենսդրության զարգացումը:

Անչափահասների համար նախատեսված ազատությունից զրկման վայրերում պետք է հատուկ ջանքեր գործադրվեն երկարաժամկետ մեկուսացման ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ: Սա ենթադրում է բազմակողմանի մոտեցում՝ օգտագործելով մի շարք մասնագետների (այդ թվում՝ ուսուցիչներ, հոգեբաններ) հմտություններն անչափահասների անհատական կարիքները կրթական և սոցիալ-թերապևտիկ անվտանգ միջավայրում ապահովելու նպատակով:¹

Անչափահաս ազատագրված անձանց համար պետությունը պարտավոր է ստեղծել բարելավված կենցաղային պայմաններ: Հիմնարկի վարչակազմը պետք է միջոցներ ձեռնարկի անչափահաս ազատագրված անձանց ժամանակը նպատակաուղղված կազմակերպելու ուղղությամբ: Անհրաժեշտ է ավելացնել զբաղվածության ծավալը և բազմազանությունը՝ ազատագրված անձանց ընտրությունն ապահովելու համար: Գործող ընթացակարգերը գրադարանից, մարզասրահից, զբոսանքից, տեսակցություններից, կարճաժամկետ մեկնումներից, հեռախոսակապից և տեսագանգից օգտվելը դեռևս բավարար չեն անչափահաս ազատագրված անձանց արտաքին աշխարհի և ընտանիքի հետ կապը պահպանելու և հետագայում նրանց արդյունավետ սոցիալական վերականգնմանը և վերաինտեգրմանը նպաստելու տեսանկյունից:

Այսօր քան երբևէ անչափահասին կվերաբերի այն, թե չափահասին խիստ արդիական է ժողովրդական իմաստությունը. երբեք մի՛ ասա երբեք... Կարող ես մուրացիկ դառնալ և կամ բանտում հայտնվել...

...Նելսոն Մանդելա, Լեխ Վալենսա, Կիմ Են Սամ, Վլադիմիր Լենին, Ադուֆ Հիտլեր, Իոսիֆ Ստալին, Լևոն Տեր-Պետրոսյան, Անդրանիկ Մարգարյան, Նիկոլ Փաշինյան... այստեղ կարող ենք թվարկել ևս երկու-երեք տասնյակ մեծ և փոքր երկրների ղեկավարների (ներկա և անցյալ) անուններ:

Ի՞նչ ընդհանրություն կա նրանց միջև:

Կռահեցիք, կարծում եմ: Այո, նրանք և նրանց տասնյակ «գործընկերներ» անցել են քրեակատարողական հիմնարկների ընդունարաններով դեպի ներս, ապա՝ դեպի ազատություն: Ոմանք՝ մի քանի ամիս, ոմանք՝ մեկ-երկու տարի, իսկ ոմանք էլ՝ քսան և ավելի տարիներ...

Որքան էլ տարօրինակ է, բայց հնարավոր է, որ բանտը իշխանության համալսարան է: Հնարավոր է, որ ազատագրվում անձին տալիս է ինքնադրսևորման առավելագույն հնարավորություն, մտավոր ակտիվության հզոր խթան:

¹ ՀՀ ՄԻՊ-ի որպես կանխարգելման ազգային մեխանիզմի իրավական չափանիշները, Երևան 2019, էջ 57:

Օրենքի և իշխանության հետ խնդիրներ են ունեցել (տարբեր առիթներով մինչև ազատությունից զրկում) նաև աշխարհի հանձարներն ու հզորները (Միգել Սերվանտես, Օսիպ Մենդելշտամ, Ալեքսանդր Սոլժենիցին, Եղիշե Չարենց, Սերգեյ Փարաջանով...): Այսպիսին է պատկերը:

Եվ այնուամենայնիվ, ի պատասխան հարցի՝ ազատագրվումը «բարի՞ք է, թե՞ չարիք», պատասխանը միանշանակ է՝ չարիք է: Չարիք՝ չարի համար, եթե առավել-լազույնս մինչև մանրուքներ պաշտպանված է օրինականությունը, և չարիք՝ անմեղի համար, ուրեմն՝ չարիք նաև բարու համար, եթե այն արդյունք է քննության և դատարանի «աշխատանքի» կամ հնուտ ինքնազրպարտության (լինում է նաև այդպես):

НЕСОВЕРШЕННОЛЕТНИЕ ОСУЖДЕННЫЕ: УГОЛОВНО-ИСПОЛНИТЕЛЬНЫЙ АСПЕКТ

Արտյուն Խաչիկյան

*Профессор кафедры уголовного права ЕГУ,
доктор юридических наук*

Статья посвящена порядку и условиям исполнения наказаний в отношении несовершеннолетних осужденных, в частности, в виде лишения свободы, выявлению целей их наказания, в особенности проблемам ресоциализации, специфике правового регулирования данной проблемы в проектах УК и УИК РА.

JUVENILE CONVICTS: PENITENTIARY ASPECT

Harutyun Khachikyan

*Profesor at the YSU Chair of Criminal Law,
Doctor of Legal Sciences*

The problems of the aims of punishments, especially the issues of re-socialization of juvenile convicts, as well as regulation and conditions of execution and serving of sentences (in particular – those related to deprivation of liberty) imposed on juvenile offenders are discussed in the article presented. The article also covers the peculiarities of sentencing juvenile crime perpetrators and executing those sentences in accordance with the provisions foreseen by the draft new Criminal Code and draft new Penitentiary Code of RA.

Բանալի բառեր՝ վերասոցիալականացման հիմնական միջոցներ, կարճա-ժամկետ ազատագրվում, անձնական անվտանգության իրավունք, քրեակատարողական հիմնարկի ընդհանուր պայման, քրեակատարողական հիմնարկի խիստ պայման:

Ключевые слова: основные средства ресоциализации, краткосрочное лишение свободы, право личной безопасности, общее условие уголовно-исполнительного учреждения, строгое условие уголовно-исполнительного учреждения.

Key words: basic means of re-socialization, short-term imprisonment, right to personal security, general condition of the penitentiary institution, strict condition of the penitentiary institution.